<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 1

01.02.2021թ. կայացած շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի վերաբերյալ

ք. Երևան **04.02.2021թ.**

2021 թվականի փետրվարի 1-ին տեղի ունեցավ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը, որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգի հարցի վերաբերյալ որոշում ընդունել:

Քվեարկությանը մասնակցում էին

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ.Քերոբյան - Էկոնոմիկայի նախարար

Կառավարաման խորհրդի անդամներ՝

Լ.Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Ա. Հովհաննիսյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Ա.Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Վ.Սիմոնյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա.Հայրապետյան - Ֆինանսների նախարարի տեղակալ

Ա.Մկրտչյան - Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների ասոցիացիայի նախագահի գլխավոր խորհրդական

Ս. Պետրոսյան -խորհրդի քարտուղար

Հրավիրված էին՝

Ա. Կոտոյան- ՇՎՏՄ ղեկավար,

Ա. Մկրտչյան- ՇՎՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա. Դանիելյան-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի

Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ա. Ավետիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական

Քվեարկության հարց

1. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության 2020 թվականի տարեկան հաշվետվությանը:

2. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020 թ. 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

3. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2020 թվականի 2-րդ կիսամյակում ստացված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվությանը:

4. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք 2021 թ. հաստատված գնումների պլանի արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ ծրագրի ծառայություններ բաժնի խմբագրված տարբերակին:

Քվեարկության նյութերը ներկայացվեցին խորհրդի անդամներին քվեարկության:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1. Վ.Քերոբյանը՝ հարցին քվեարկեց կողմ,

2. Լ.Նանուշյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
3. Ա.Ասոյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
4. Վ.Սիմոնյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
5. Ա.Հայրապետյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
6. Ա.Մկրտչյանը՝ հարցին քվեարկեց կողմ.
7. Ա.Հովհաննիսյանը՝ հարցին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 7 կողմ:

1. ԼՍԵՑԻՆ – Վ.Քերոբյանը հայտնեց օրակարգում ավելացնել 5-րդ հարց՝ հաջորդ խորհրդի նիստի օր 01.04.2021թ. որոշելու վերաբերյալ: Ա.Մկրտչյանը ներկայացրեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության 2020 թվականի տարեկան հաշվետվությունը: Արմեն Կոտոյանը նշեց, որ տեսչական մարմինը ձեռք է բերել բենզինի և ոսկյա իրերի լաբորատոր փորձարկման սարքավորումներ, որոնք առավել արդյունավետ կդարձնեն տեսչական մարմնի աշխատանքները:

Արթուր Ասոյանը հայտնեց վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախաձեռնված փոփոխությունների մասին, մասնավորապես խոսեց իրավախախտումների դեպքում նախատեսված տուգանքների չափի փոփոխության մասին: Նախագիծը շրջանառության փուլում են: Արթուր Ասոյանը նաև տեղեկացրեց, որ դեռ նախորդ տարի օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանվել է չափագիտական կանոնների և նորմերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս նախապես երեք աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտին ստուգման մասին տեղեկացնելու պահանջը, որի կիրարկման արդյունքում սկզբում կտրուկ ավելացել են բենզալցակայաններում և հեղուկ գազի լցակայաններում թերալցումների բացահայտման դեպքերը, ապա խախտումների թիվը նվազել է, թեպետ խախտումների ամբողջական վերացման համար այն վերջնական գործիքակազմ չէ: Թերալցումների խնդիրը կարգավորելու համար ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը: Մշակվել է շուկայի վերահսկողության ոլորտը կարգավորող օրենսդրական փաթեթ, նախատեսվում է բենզալցակայաններում կիրառել չափանոթներ՝ նախատեսելով հանրային վերահսկողության հավելյալ գործիքակազմ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ –Արմեն Կոտոլյանը, որ տեսչական մարմինը ձեռք է բերել բենզինի և ոսկյա իրերի լաբորատոր փորձարկման սարքավորումներ, որոնք առավել արդյունավետ կդարձնեն տեսչական մարմնի աշխատանքները, Արթուր Ասոյանը հայտնեց վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախաձեռնված փոփոխությունների մասին, որոնք շրջանառության փուլում են: Խորհրդի անդամ Վարոս Սիմոնյանը հայտնեց, որ ԵԱՏՄ մի շարք տեխնիկական կանոնակարգերով (խաղալիքներ, օծանելիքակոսմետիկական արտադրատեսակներ, երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքներ) լաբորատոր փորձարկումներից ՀՀ-ում կատարվում են բոլորը, բացի կլինիկական/թունաբանական փորձարկումներից և հավելեց, որ նախարարության աջակցությամբ այդ բացը լրացնելու համար արդեն մեկնարկել են համապատասխան աշխատանքներ, ինչն էլ առավելագույնը 3 ամսվա ընթացքում կկարգավորվի: Արթուր Մկրտչյանին հարց ուղղվեց բենզինի և ԱԳԼՃԿ-ների մասով ստացված բողոքների շատ քանակի մասին Ա.Մկրտչյանն ի պատասխան նշեց, որ տեսչական մարմնի առավել հետևողական աշխատանքների արդյունքում գրեթե ամբողջությամբ կան դրական տեղաշարժ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության 2020 թվականի տարեկան հաշվետվությանը:

կողմ 7

դեմ 0

2. ԼՍԵՑԻՆ –Արարատ Սարգսյանը ներկայացրեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020 թ. 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Արարատ Սարգսյանը ներկայացնելով հաշվետվությունը նշեց, որ համաձայն կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ստուգումների տևողությունը քշացել է, որի արդյունքում էլ խնայվել են դրամական միջոցները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020 թ. 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

կողմ 7

դեմ 0

3. ԼՍԵՑԻՆ – Արթուր Մկրտչյանը ներկայացրեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2020 թվականի 2-րդ կիսամյակում ստացված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ –Արթուր Ասոյանը և Արթուր Մկրտչյանը ներկայացրեցին արդեն իսկ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում առավել քիչ դիմում-բողոքների ստանալու հանգամանքը, որը ևս դրական է գնահատվում սպառողների համար, ինչպես նաև ստացված դիմում-բողոքների արդյունքում իրականացվել են ստուգումների, սակայն հազվադեպ են տնտեսվարող սուբյեկտների մոտ խախտումներ հայտնաբերվել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2020 թվականի 2-րդ կիսամյակում ստացված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվությանը:

կողմ 7

դեմ 0

4. ԼՍԵՑԻՆ – Արթուր Մկրտչյանը ներկայացրեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք 2021 թ. հաստատված գնումների պլանի արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ ծրագրի ծառայություններ բաժնի խմբագրված տարբերակին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ –Արթուր Մկրտչյանի կողմից ներկայացվեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք 2021 թ. հաստատված գնումների պլանի արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ ծրագրի ծառայություններ բաժնի խմբագրված տարբերակը, փոփոխելու դեպքում անցկացվող լաբորատոր փորձարկման մրցույթները կանցկացվեն առանձին-առանձին անվտանգության ցուցանիշերով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք 2021 թ. հաստատված գնումների պլանի արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ ծրագրի ծառայություններ բաժնի խմբագրված տարբերակին:

կողմ 7

դեմ 0

Խորհրդի անդամների 7 կողմ ձայները հաշվի առնելով՝ կառավարման խորհուրդը որոշեց.

1.Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության 2020 թվականի տարեկան հաշվետվությանը:

2.Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020 թ. 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

3.Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2020 թվականի 2-րդ կիսամյակում ստացված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվությանը:

4.Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք 2021 թ. հաստատված գնումների պլանի արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ ծրագրի ծառայություններ բաժնի խմբագրված տարբերակին:

5.Որոշվեց 01.04.2021 թվականին ժամը 15:00-ին նշանակել հաջորդ կառավարման խորհրդի նիստ:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ.Քերոբյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ս.Պետրոսյան**
ստորագրություն